

«ԵՍ ԿԵՆԴԱՆԻ ԵՄ, ԵՒ ԴՈՒՔ ԿԵՆԴԱՆԻ ԼԻՆԵԼՈՅ ԷՔ»

(ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆՆՎԻՐՎԱԾ

ԲՈՒՆԱԴԱՏՎԱԾ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ)

Հունիսի 16-ին Հայաստանի Ազգային Արխիվում, Մայր Աթոռի Արխիվի և Հայաստանի Ազգային Արխիվի համալրող ջանքերով, տեղի ունեցավ «Ես կենդանի եմ, եւ դուք կենդանի լինելոց էք» (Հովհ. ԺԴ 19) խորագրով արխիվային փաստաթղթերի և նյութերի ցուցադրություն՝ ի հիշարարկ 1920-1950-ական թվականներին բռնադատված հոգևորականների: Ներկայացված էին Հայաստանի Ազգային Արխիվում պահվող ավելի քան 100 վավերագրեր, ընդ որս՝ բռնադատված հոգևորականների անձնական գործեր, զանազան փաստաթղթեր, ինչպես նաև խնդրո ժամանակաշրջանի Ամենայն Հայոց Կաթողիկոսների գրությունները՝ ուղղված խորհրդային իշխանություններին՝ Հայոց Եկեղեցու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և հոգևորականաց դասի դեմ սանձազերծված բռնություններն ու հալածանքները դադարեցնելու պահանջով:

Տեղումական աղոթքից հետո բացման խոսքով հանդես եկավ Հայաստանի Ազգային Արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանը՝ հանգամանորեն ներկայացնելով բռնադատված հոգևորականների վերաբերյալ Ազգային Արխիվում պահվող և ցուցադրված վավերագրերը: Այնուհետև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տնօրէն Ս. Եղիշե ավագ քահանա Մարգարյանը, ցուցադրության կազմակերպիչներին փոխանցելով Նորին Սուրբ Օծություն Ս. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու բարձր գնահատանքը, ներկայացրեց այդ փարիների մասին իր հիշողությունները: Ելույթ ունեցավ նաև պարմաբան Արմենակ Մանուկյանը, ում աշխատասիրությամբ ՊԱԿ-ի փաստաթղթերի հիման վրա փարիներ առաջ լույս է տեսել «Հայ Առաքելական Եկեղեցու բռնադատված հոգևորականները 1930-1938 թթ.» գիրքը:

Այա հանդես եկավ Մայր Աթոռի Արխիվի տնօրեն Ս. Ասողիկ քահանա Կարապետյանը.

«Մեծարգո Դարոն Վիրաբյան,

Արժանապարիվ հայրեր,

Պարվարժան ներկաներ և հյուրեր,

Նախ և առաջ մեր ուրախությունն ենք ուզում հայրենի, որ Տիրոջ ողորմությամբ կարելի եղավ իրականացնել այս ցուցադրությունը: Հայաստանի Ազգային Արխիվի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համալրող այս ձեռնարկը, միանշանակ, արդարության պահանջ է և հոգու պարտք, քանզի ինչպես փարիներ առաջ գրել էր երջանկահիշարարակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը՝ «անարդար պիտի լինեն մոռացության փախ այդ դաժան ժամանակներում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կրած տառապանքներն ու ավերումները»:

Այո՛, անարդար պիտի լինեն, եթե երբևէ, մանավանդ այսօր, երբ աստվածընծա մեր Հայրենիքում վերականգնել է Հայոց Պետությունը, երբ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին անկաշխան ու անբողջանվեր իր սուրբ առաքելությունն է իրականացնում ի մեզ հարազատ ժողովրդյան, հասկարծ մոռացության գրի մեջ

շարունակելի մնալ հայ ժողովրդի ընդերք զավակները: Նրանք, ովքեր, իրենց կյանքն իմաստավորած ու արժեվորած աստվածամանադրությամբ ու աստվածպաշտությամբ, իրենց անձերն ընծայել էին հարազատ ժողովրդի ու Մայր Եկեղեցու ծառայության սուրբ առաքելությամբ: Առաքելություն, որ կյանքի էին կոչում անասան ընդդեմ ամենայն դժվարության և նեղության, բայց մանավանդ՝ հակառակ 1920-1950-ական թվականներին ասնձագերծված հայաժմանքների ու բռնությունների, հակառակ սրեղծված դժոխսյին պայմանների:

Իսկ թե ինչպիսի հայաժմանքների ու բռնությունների էին ենթակա հայ ժողովրդին ընդհանրապես և Հայոց Եկեղեցին ու հայ հոգևորականը, և թե ովքեր էին այդ վայրագությունների կազմակերպողներն ու կատարողները, բացահայտվում են այս ցուցադրականներում զերեղծված և այս հաստատության պահոցներում պահպանվող անգին վկաների վկայություններով: Այո՛, այդ վկայությունները բացահայտում են եղելությունը, սակայն միաժամանակ խոցուրում իրենց հայոդ և ունկընդդոդ ամեն մի ճշմարիտ հայ քրիստոնյայի սիրտը, ցավալիսնք դարձնում հոգին և փոթորկում միտքը: Ամեն մի վավերագիր-վկայի լսելիս չես կարող ողբի ու լացի արցունքների հեղեղապի մեջ շնչահեղձ չլինել:

Մի՞թե մարդ չի հուզվի ու սրտաբեկվի, երբ ականջալուր լինի այդ մասին, կամ անձամբ ընթերցելով՝ տեղեկանա, որ Ամենայն Հայոց Հայրապետը, Ուլ Ինքն է կոչված միխթարեկու Յուր հոբին, տեսնելով բռնադատված հոգևորանք հոգևոր ապաստավորներին՝ ցնցված ասում է. «Երանի թե կուրանայի, ձեզ այս վիճակի մեջ չտեսնեի»: Բացականքում է և ապա, ինչպես ականջալուր է գրում՝ «երեսն առավ ձեռքերի մեջ ու լաց եղավ»...

Մի՞թե լաց չես լինի, երբ տեղեկանաս, որ բարեգործության կոչված մարդկային ձեռքերը, բայց մանավանդ արարչաստեղծ հայի ձեռքերը, կարող էին դառնալ չարագործ և մեծ ոճի գործել՝ սպանել Նովվապետի, սպանել Ասրծո Օձյալին...

Մի՞թե ողբակից չես լինի որբացած հայ վարդապետին, ով, ինչպես այստեղ առկա վավերագիրն է պարմում, գլուխը դրած սպանված «կաթողիկոսի կրծքին, ոչ տղամարդավարի ողբում էր Նրա մահը»...

Եվ, վերջապես, բնավ չես կարող չխենթանալ՝ տեղեկանալով, որ մի Եկեղեցի, ով դարերի հոյակապություն միմիայն հավատք, հույս, սեր ու լույս է ճառագել ու սրբունել, շինարար ու սրեղծագործ առաքելություն իրականացրել, հայոց փոթորիկ հոբին փրկության մայրողիով առաջնորդել, հանկարծ կարող է բռնադատվել և խոչտանգվել: Եվ որ հեղափոխություն էր հրեշային մի մարածումով առաջարկել. «Հայաստանի Կոմ(ք) Կուսի Կենտկոմը, քննարկելով Էջմիածնի վանքի և Կաթողիկոսության հարցը, որոշել է՝ հաշվի առնելով, որ եղած նյութերը մերկացնում են Էջմիածնի Կաթողիկոսության գործուն պայքարը խորհրդային իշխանության և հայ ժողովրդի դեմ՝ փակել Էջմիածնի վանքը, այն վերածելով թանգարանի, նոր կաթողիկոսի ընտրություններ չանցկացնել և լիկվիդացնել հայ հոգևորականության կենտրոնը՝ Էջմիածնի Կաթողիկոսությունը...»:

Բայց Կենդանի է Աստված, ուստի և չէր կարող անասան ջննալ Տիրոջ իսկ հիմնադրած Հայոց Եկեղեցին և Բարձրյալի իսկ հաստատած Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Դարերի ընթացքում Տեր Դիսուս Բրիսարուսի այս խոսքի զորությամբ և այդ խոսքի հանդեպ հայության փածած աներկբա հավատքի ներգործությամբ է, որ հայ ազգը մահվան մեջ միշտ կենդանի է մնացել և հարստել է այս արևի ներքո: Ահա և Տերունի այդ խոսքի զորությամբ էր, որ մահվան հովիտ դարձած Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և ավերակված Հայոց Եկեղեցին չդարձան թանգարան ու պարանոթյուն, այլ հարություն առան և շարունակեցին ապրել, և ապրել միմիայն հարստանելու վճռականությամբ, որպեսզի ցկարարած աշխարհի հայկականությունը մնա աստվածային ներկայակալում որպես կենսավիշ գոյն, և հայ ցեղով ընդմիշտ ամբողջական մնա համայն մարդկությունը:

Փա՛նք Բեզ, Տեր, որ այլևս անցյալում եմ այդ սարսափելի օրերն ու փարիկները, փա՛նք Բեզ, Տեր, որ այսօր կենդանի է Հայոց Եկեղեցին և պայծառացած Մայր Աթոռը հանուր հայության: Այո՛, թեև Հայոց Եկեղեցու պարարտ անդամարանում մեռան ցորենհատիկները, սակայն այսօր որպես արդյունք րվել են արոք հասկեր, որոնք շարունակելու են մեր մեծ նահապետների սուրբ առաքելությունը՝ հայ կյանքում վառ պահելով քրիստոնեական հավատքը և այդ հավատքով պայծառակերպված ու բյուրեղացած հայ ոգեղենությունը:

Բյո՛ր օրհնություն, խունկ և լույս 1920-1950-ական թվականներին բռնադարված ու նահապետված, բայց հավիրյալ կենդանի մերսզնյա հոգևորականների սուրբ հիշարակին:

Այժմ թույլ րվեք ի Տեր ննջեցելոց աղոթքով հայց ու պաղարանք մարուցել Բարեգութ Տիրոջը և ասել.

«Բրիսարուս, Որդի Աստուծոյ, անդիակալ եւ բարեգութ, գթա՛ Բո արարչական սիրտով ի հոգիս հաւօրէն ննջեցելոցն ազգիս հայոց, եւ մանաւանդ զհոգիս բռնադարեալ, արքորեալ եւ նահապետեալ ապաստորացն Եկեղեցոյս Հայաստանեայց:

Յիշեա՛ զնոսա յաւուր մեծի զայսրեան արքայութեան Բո: Արա՛ արժանի ողորմութեան, քաւութեան եւ թողութեան մեղաց: Դատարեալ պայծառացո՛ ընդ սուրբս Բո յաջակողմեան դատուն: Զի դու եւ Տեր եւ Արարիչ ամենեւոյն, դարաւոր կենդանեաց եւ մեռելոց: Եւ Բեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պարիս, այժմ եւ միշտ եւ յաիսրեանս յաիսրեանից. ամէն»:

Բռնադարված հոգևորականների արխիվային կյտրերի ցուցադրության բացման հանդիսությունը եզրափակեց «Լույս» վոկալ կվինտետը՝ կատարելով հոգևոր և ժողովրդական երգեր:

ՄԱՅՐ ԱԹՈՐԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԲԱԺԻՆ